Հավելված N 1
ՀՀ կառավարության 2021 թվականի
ապրիլի 15-ի N 600 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԲՆԱԿԵԼԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

1. Բնակելի՝ մարդկանց բնակության համար նախատեսված շինություններ, բաղկացած բնակելի ու օժանդակ և տնտեսական մասերից՝ օժտված կոմունալ հարմարություններով:

2. Անհատական բնակելի տուն, առանձնատուն, այգետնակ (ամառանոց)՝ հողամասի վրա կառուցված, իր օժանդակ և տնտեսական շինություններով կառույցը:

3. Հիմնական շինություն՝ հիմնական է կոչվում այն շինությունը, որը նույն հողատարածքի վրա գտնվող այլ շինությունների շարքում հանդիսանում է իշխողը (գլխավորը) շինվածքի հիմնականության, ճարտարապետական հորինվածքի և նպատակային նշանակության հատկանիշներից ելնելով: Նույն հողատարածքի վրա կարող են տեղադրված լինել մեկից ավելի հիմնական շինություններ:

4. Օժանդակ և տնտեսական շինություն՝ նույն հողատարածքի վրա գտնվող հիմնական շինության նկատմամբ երկրորդական նշանակություն ունեցող շինությունը: Օժանդակ և տնտեսական շինությունների թվին են պատկանում անասնաշենքերը, հացատները, խորդանոցները, մարագները, ցախատները, անհատական օգտագործման ավտոտնակները, շվաքարանները, ջերմոցները, մառանները, բակային լողավազանները, ջրավազանները և այլ կառույցներ:

5. Բազմաբնակարան բնակելի կամ բազմաֆունկցիոնալ շենքի բնակարան՝ բազմաբնակարան բնակելի կամ բազմաֆունկցիոնալ շենքում ֆիզիկական անձանց բնակության համար նախատեսված, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը:

6. Բազմաբնակարան բնակելի կամ բազմաֆունկցիոնալ շենք՝ մեկից ավելի բնակարաններ, ոչ բնակելի և ընդհանուր օգտագործման տարածքներ ունեցող կառույցը:

7. Բազմաբնակարան բնակելի կամ բազմաֆունկցիոնալ շենքի ոչ բնակելի տարածք՝ բազմաբնակարան բնակելի կամ բազմաֆունկցիոնալ շենքում բնակարան կամ ավտոտնակ (ավտոկայանատեղի, ավտոհանգրվան) կամ հասարակական, արտադրական նշանակության շինություն չհամարվող, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը:

8. Ավտոտնակ (ավտոկայանատեղի, ավտոհանգրվան)՝ տրանսպորտային միջոցների կայանման համար նախատեսված կառույցը:

9. Հանրակացարան՝ ժամանակավոր բնակության համար նախատեսված տարածքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

19.04.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ